

- 3) գազափոխադրման համակարգի վերակառուցում 2007-2009 թվականների ընթացքում՝ 1580,7 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 900,7 մլն դրամ,
- 4) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ 2007-2009 թվականների ընթացքում՝ 314,7 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 204,8 մլն դրամ,
- 5) գազաբաշխման համակարգի ընդլայնում՝ 2007-2009 թվականների ընթացքում՝ 3216,7 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 1816,7 մլն դրամ,
- 6) գազաբաշխման համակարգի վերակառուցում 2007-2009 թվականների ընթացքում՝ 3443,8 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 1295,6 մլն դրամ,
- 7) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ 2007-2009 թվականների ընթացքում՝ 2665,6 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 1668,5 մլն դրամ¹:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանձնարարվել է «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2007 թվականի նոյեմբերի 1-ը Հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ընկերության 2008-2010 թվականների ներդրումային ծրագիրը:

Այսպիսով՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2007-2009 թվականների ընթացքում հսկայածավալ ներդրումներ են նախատեսում հիմնականում գազափոխադրման և գազապահեստավորման կառուցման բնագավառներում, որոնք Հայաստանի մեծ երկրի համար ունեն ռազմավարական և տնտեսական անվտանգության տեսանկյունից բավականին մեծ նշանակություն: Նման ներդրումները ունեն բազմաթիվ նշանակություն և դրանց տնտեսական արդյունքներն ավելի ակնհայտ են դառնում յուրաքանչյուր տարի:

ԷԲԱ ԲԱԲԱՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, աշխ. գ. ք. պրոֆեսոր*

ՀՀ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության տարածքի բնական պայմանները և ռեսուրսները նրա տնտեսության զարգացման կարևորագույն նախադրյալներն են, որոնց ճիշտ և խնայողաբար օգտագործումից է կախված հանրապետության բնակչության նյութական պահանջարկի բավարարումը և բարեկեցիկ կյանքը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության անցումը կենտրոնացված պլանավորումից դեպի շուկայական տնտեսական հարաբերություններ կոչված էր կարճատև, միջին և երկարատև հեռանկարում բարելավելու երկրի ոչ միայն տնտեսական վիճակը, այլև նպաստելու նրա բնական միջավայրի էկոլոգիական իրավիճակի կայունացմանը: Շուկայական հարաբերություններն իրենց մեջ ներառում են օրենքների, ֆինանսական ներդրումների, հարկերի, տուգանքների և պատիժների մի այնպիսի համակարգ, որը կրացառի կամ նվազագույնի կհասցնի բնական ռեսուրսների շռայլումը և գիշատիչ շահագործումը՝ դրանով իսկ պահպանելով բնական միջավայրը մարդածին և տեխնածին աղտոտվածությունից, և մարդկանց համար կստեղծվեն առողջ կենսապայմաններ: Այդ հիմնախնդիրների լուծումն անհրաժեշտ է ոչ միայն ներկա բնակչության, այլև գալիք սերունդների համար, որոնց վրա կախվել է էկոլոգիական ճգնաժամի իրական սպառնալիքը:

Գնալով համընդհանուր ձևով վատթարանում է շրջակա բնական միջավայրի աղտոտվածությունը: Այդ կապակցությամբ առաջ է գալիս միջոցառումների խիստ անհրաժեշտություն, որոնք կապահովեն մարդկանց առողջությունը, շատ թե քիչ չափով կբարձրացնեն նրանց կենսաապրելակերպը և աշխատանքային գործունեությունը:

Ժամանակակից բնօգտագործման և բնապահպանական քաղաքականությունն ուղղված է ազգային, տարածաշրջանային և գլոբալ բնապահպանական հիմնահարցերի լուծմանը՝ կապված էկոլոգիական անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի, կյանքի և մարդկանց առողջության բարելավման խնդիրների հետ: Հիմնահարցերի մեծ համադրումը ներկայումս կայուն էկոլոգատնտեսական զարգացման հայեցակարգի շրջանակներում ստացել է նոր՝ գիտական հիմնավորում: Կայուն զարգացման գաղափարախոսությունը վերածվել է կոնկրետ ռազմավարական գործողությունների, որոնք պետք է ունենան համապատասխան գիտական հենք: Նման գաղափարախոսության ընդունումը զարգացող երկրների, այդ թվում նաև ՀՀ-ի կողմից, ըստ էության, նշանակում է միացում բոլոր այն գիտագործնական քայլերին, որոնք ուղղված են տնտեսական գործունեության համընդհանուր էկոլոգայնացմանը:

Տարբեր երկրների փորձի վերլուծությունները վկայում են, որ անհնար է ապահովել կայուն տնտեսական զարգացում բնական միջավայրի քայքայման ու բնական ռեսուրսների հյուծման հաշվին, ինչպես նաև, առանց հզոր տնտեսության՝ պահպանել միջավայրի, հետևաբար նաև հասարակական կյանքի անհրաժեշտ որակը²:

Շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունն իր հերթին ենթադրում է տնտեսական ակտիվության նոր որակի ապահովում, նպաստում լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, մասնավորապես, էկոլոգիական ուղղվածության ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը: Այսպիսով, հաստատվում է այն դրույթը, որ տնտեսության զարգացումն անհրաժեշտ պայման է գերակա էկոլոգիական հիմնահարցերի

¹ www.armrusgasprom.am

² Лукьянченков Н.Н., Потравный И.М. Экономика и организация природопользования — М.: Тройка, 2000, -456с.

լուծման համար: Ավելին, էկոլոգիական բարեկեցությունը և տնտեսության զարգացումը փոխկապակցված են և դրանց համաչափության ապահովումը ներկայումս գնահատվում է որպես հասարակական բարեկեցության կարևոր երաշխիք: Հետևաբար, ժամանակակից տնտեսագիտությունը և բնօգտագործման կազմակերպումը պետք է հաշվի առնեն նշված հասկացությունները և սահմանեն ռացիոնալ հարաբերակցություն սպառման, արտադրության զարգացման մակարդակների ու էկոլոգիական գործոնների միջև:

Հանրապետության հետագա սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը և հեռանկարները զգալի չափով պայմանավորված են նրա բնառեստրսային ներուժի իրական պատկերից, նրանց ռացիոնալ օգտագործումից, պահպանումից և վերարտադրումից:

Շրջակա բնական միջավայրի պահպանությունը վերջին ժամանակներում դարձել է տարբեր գիտությունների, այդ թվում տնտեսագիտության ուսումնասիրությունների առարկա: Հասարակական արտադրության անընդհատ աճը և զարգացումը առաջ են բերում բնական միջավայրի բացասական փոփոխություններ: Հասարակությունը ինքն ի վիճակի չէ վերացնել իր իսկ կողմից ստեղծված բացասական հետևանքները, որոնք ձեռք են բերում առավել աճող նշանակություն՝ կապված ռեկրեացիայի, մարդկանց պահանջարկի մեծացման հետ:

Յուրաքանչյուր սուվերեն երկիր ընտրում է բնապահպանության ազգային առաջնահերթությունների իր ռազմավարությունը՝ միաժամանակ հաշվի առնելով իր վրա վերցրած միջազգային պարտավորությունները և պայմանագրերը: Նպատակաուղղված էկոլոգիական քաղաքականությունն իր մեջ ընդգրկում է բնության ինքնակարգավորման առանձնահատկության և տնտեսական մեթոդների խելացի զուգակցման գործընթաց, որը հնարավորություն է տալիս ստանալ առավելագույն պոտենցիալ օգուտ՝ կապված տնտեսության վերակառուցման հետ: Տուգանքների և հարկերի կիրառությունը կարող է նվազեցնել օդի աղտոտման մակարդակը և խթանել վառելանյութերի առավել մաքուր տեսակների և տեխնոլոգիաների օգտագործումը: Ինչ վերաբերվում է օդի, ջրերի և հողերի՝ ծանր մետաղներով և թունավոր քիմիական նյութերով ապականմանը, ապա այս դեպքում անհրաժեշտ է ընդգրկել ստանդարտների այն համակարգը և խիստ պահանջները, ինչպիսիք կիրառվում են Եվրամիության երկրներում:

Ներկայումս գոյություն ունեցող միջազգային ստանդարտները վերանայվում են, հիմք ընդունելով կուտակված փորձը, որի նպատակն է բարձրացնել դրանց արդյունավետությունը, որը հնարավորություն կտա առաջիկա 10-20 տարում իրականացնել բնության պահպանության նոր ստանդարտներ և նորմատիվներ:

Բնապահպանության հիմնախնդիրները սերտորեն կապված են սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման հետ, որոնք պայմանավորված են մարդու և բնական միջավայրի փոխներգործության գործընթացների ուժեղացմամբ, դրանց՝ մարդու, նրա կենցաղի վրա ազդեցության բարձրացմամբ:

Ներկայումս աշխարհի մի շարք արդյունաբերական զարգացած երկրներում շրջապատող բնական միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը ծայրահեղ անբավարար է, ազդեցիվ խառնուրդների կենտրոնացումը նշանակալի չափով ավելանում է և տնտեսությանը հասցնում հսկայական վնասներ: Շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակը մեծ սպառնալիք է ներկայացնում արդյունաբերական շրջանների բնակչության, դաշտավարության, անտառային ծածկի համար: Մթնոլորտի, ջրերի, հողերի թունավորումն առաջ է բերում մի շարք հիվանդություններ և նպաստում դրանց ավելացմանը:

Օդն աղտոտվում է հիմնականում ծխի գազերով, որոնց մեջ առկա են ծծմբի օքսիդ, ազոտ և ածխածին, ինչպես նաև տարբեր ածխաջրածնային և կոնցերտոգեն նյութեր, կործանիչ ազդեցություն թողնում կենդանի օրգանիզմների և բուսական աշխարհի վրա: Բնությունն աղտոտող նյութերի քանակությունն անընդհատ ավելանում է, իսկ բնական միջավայրի պայքարելու, մարդածին վնասակար ազդեցություններից ինքնամաքրվելու հնարավորությունները խիստ սահմանափակ են: Աղտոտվածությունը բնության վրա բացի ուղղակի վնասակար ազդեցությունից ունենում է նաև անուղղակի ազդեցություն, այն ոչնչացնում և թունավորում է գյուղատնտեսական կուլտուրաները և անասուններին, հետևաբար դրանցից ստացվող մթերքները դառնում են օգտագործման համար ոչ պիտանի:

Ամեն տարի աշխարհի արդյունաբերական ձեռնարկությունները մթնոլորտ են արտանետում 77-10⁶ տ ծծմբի օքսիդ, 53-10⁶ տ ազոտի օքսիդ, 304-10⁶ տ ածխածնի օքսիդ, 88-10⁶ տ ածխաջրածին և այլն: Կտրուկ ավելանում է օրգանական և ոչ օրգանական վառելանյութերի քանակությունը՝ պատճառ դառնալով լրացուցիչ խնդիրների, որոնց լուծումից է կախված տվյալ երկրի տնտեսության զարգացման տեմպերի աճը:

Տնտեսության աճը և ակնկալվող կառուցվածքային փոփոխությունները տնտեսության մեջ կրում են հակասական միտումներ՝ կապված շրջակա միջավայրի հետ:

Արտադրության աճն ուղեկցվում է տնտեսության արդիականացմամբ, էներգա- և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրմամբ, սկզբնական արտադրական ռեսուրսների տեսակարար պահանջարկի նվազեցմամբ, որոնք համարվում են հզոր գործոն՝ էկոլոգիական իրավիճակի կայունացման և բարելավման համար:

Բնական նյութերը, գործոնները, որոնք ազդում են մարդկանց կյանքի և կենսակերպի վրա, կոչվում են բնական ռեսուրսներ: Դրանց թվին են պատկանում.

- արեգակնային ճառագայթումը, որը ներկայումս ամփոփակվում է օգտագործվում մարդկանց կողմից, սակայն բուսական աշխարհի համար ֆոտոսինթեզի միակ աղբյուրն է (հետագայում արեգակի էներգիան կարող է դառնալ տնտեսության համար էներգիայի ստացման մշտական և վիթխարի ռեսուրս),
- օդը, որի մաքրությունը հսկայական նշանակություն է ձեռքբերում ուրբանիզացման՝ բարձր աստիճան ունեցող տարածքների համար (այս խմբին կարելի է դասել նաև քամին՝ որպես էներգիայի աղբյուր),
- կենսաբանական և հանքային տարրերը, որոնք կանխորոշում են նաև հողի բերրիությունը,

- հանքային, բուսական և կենդանական նյութերը, որոնք ձևավորում են սննդի, փայտամշակման արդյունաբերությանը և վառելիքի հումքային բազան (այս խմբում կարելի է ներառել մալ ձկնաբուծությունը, որսորդությունը, վայրի պտուղների և դեղաբույսերի հավաքումը և այլն):

1989-1995թթ. Հայաստանում սկսվեց կիրառվել նոր բնապահպանական քաղաքականություն, որի նպատակն է բնօգտագործման կարգավորման տնտեսական մեթոդների ուժեղացումը, շրջակա միջավայրի պահպանման կառավարման ապակենտրոնացումը և տարածքային տնտեսական կառույցների իրավունքների ընդլայնումը:

Վերջին հաշվով, բնության կողմից տրված ռեսուրսների տնտեսական գնահատումը, ելնելով դրանցից ստացվող արդյունքի նշանակությունից, ձևավորվում է տարբեր շահերի ազդեցության ներքո: Բնական ռեսուրսների տնտեսական գնահատումն, այսինքն՝ նրա օգտագործման, խնայողության, վերարտադրության որոշակի հարաբերությունները, չի կարող ստանալ քանակական արտահայտություն և ձևակերպվել իրավաբանորեն: Մեծամասամբ այն առկա է որպես ուղեկցող արդյունք, որը ձևավորվել է գործնականում մեկ ռեսուրսը մյուսով փոխանակելու դեպքում:

Էկոլոգիական և տնտեսական շահերի ներքին հակասությունները հիմնված են այն բանի վրա, որ հասարակության էկոլոգիական շահերը պահանջում են շրջակա միջավայրի պահպանում, իսկ տնտեսական շահերը, որոնք ուղղված են հասարակության մշտապես աճող պահանջմունքների բավարարմանը, պահանջում են բնական միջավայրի վրա անընդհատ աճող մասշտաբներով ազդեցություն և, հետևաբար, խախտում են նրա ամբողջականությունը:

Այսպիսով, էկոլոգիական և տնտեսական շահերի հակասությունը ամենից առաջ օբյեկտիվորեն բացատրվում է գործող «բնություն-հասարակություն-արտադրություն» համակարգի ներքին հակասությամբ, սակայն այդ դեպքում էլ անհրաժեշտ է հաշվի առնել հասարակության բուն տնտեսական համակարգի ներսում ձևավորվող հակասությունները, որոնք ունեն իրենց պատճառներն ու հաղթահարման տրամաբանությունը, սակայն էկոլոգատնտեսական համակարգի զարգացման ընթացքում դրանք փոխկապակցված և փոխապայմանավորված են:

Բնական ռեսուրսների օգտագործման սահմանափակությունը ծնում է տնտեսական և էկոլոգիական շահերի հակասություն: Ընդհանրապես, շրջակա միջավայրի պահպանումը կարող է ապահովվել տարբեր տնտեսական սուբյեկտների փոխներգործության համակարգի առկայության դեպքում, որն օգտագործում է էկոհամակարգի բազմաթիվ տարրեր: Սակայն, իրականում տնտեսական-էկոլոգիական շահերի ձևավորման ընթացքում լուրջ դժվարություններ են առաջանում: Այստեղ առաջացող հակասությունների լուծման համար կարևոր նշանակություն ունեն բուն տնտեսական շահերի համակարգում առաջացող հակասությունները, իսկ դրանց լուծումն իր հերթին պայմանավորված է սեփականատիրական հարաբերություններով:

Տնտեսվարող սուբյեկտները՝ ելնելով իրենց տնտեսական շահերից, ընդլայնում են իրենց գործունեության շրջանակներն՝ էլ ավելի խորացնելով բնական միջավայրում տեղի ունեցող բացասական գործընթացները:

Էկոլոգիապես հիմնավորված տնտեսվարումը պահանջում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական շահերի համաձայնեցում՝ ուղղված բնական համակարգի ամբողջականության պահպանմանը: Գրեթե բոլոր երկրներում բնական ռեսուրսները մեծամասամբ պետական սեփականություն են, հանդես են գալիս որպես մենաշնորհային օգտաործման օբյեկտ, և դրանց օգտագործողների տնտեսական շահերի իրացմամբ անհնար է տվյալ բնական ռեսուրսի օգտագործման համար էկոլոգիական հիմնավորվածություն տալ: Տնտեսվարող սուբյեկտների էկոլոգիական անհամաձայնեցված գործողությունները խախտում են տվյալ բնական օբյեկտի օգտագործման ֆունկցիոնալ հատկությունները: Այդ պատճառով առաջանում է օրենսդրական համապատասխան ակտերի ընդունման անհրաժեշտություն:

Սակայն, օբյեկտիվ պատճառներով միշտ չէ, որ հնարավոր է հասնել տնտեսվարող սուբյեկտների էկոլոգիապես համաձայնեցված գործողության: Տարբեր տարածքներում ստեղծվում է էկոլոգիապես անհամատեղելի ճյուղային կառուցվածք, բայց իրականացվում է մեկ բնական ռեսուրսի ֆունկցիոնալ շահագործում: Այսպես, Սևանի ջրերի օգտագործումն էներգետիկ նպատակներով վերջին տարիներին նպաստել է լճի բնական մակարդակի նոր իջեցման (1991-1999թթ.՝ շուրջ 1.3մ-ով), որի հետևանքով նկատվում են ձկնաբուծության անկում, ջրի բաղադրության և լճի շրջակա միջավայրի փոփոխություն և այլն: Վառելիքաէներգետիկ ճգնաժամը վերջին տարիներին ստիպեց Հայաստանում անտառների զանգվածային հատման (միայն 1993-1997թթ. հատվեց անտառածածկի շուրջ 10%-ը): Ելնելով վերը նշվածից՝ Հայաստանում հիմնական բնապահպանական խնդիրների թվին են պատկանում.

- բնական ռեսուրսների գերշահագործում (ներառյալ ջրային պաշարների սպառումը, հողի էրոզիան և կենսաբազմազանության աղքատացումը),
 - առանձին ոլորտներին հատուկ հիմնախնդիրներ (ներառյալ օդի, հողի և ջրերի աղտոտումը),
 - բնապահպանական՝ առողջապահական հիմնախնդիրներ:
- Հայաստանի բնապահպանական քաղաքականության խնդիրների իրականացմանը հիմնականում խոչընդոտում են.
- բնապահպանական թույլ հաստատությունները և վարչական համակարգը,
 - բնապահպանական թույլ օրենսդրական դաշտը,
 - մոնիտորինգի և գործադրման ոչ լիարժեքությունը,
 - բնապահպանական համակցված կառավարման բացակայությունը:

Չնայած բնապահպանական հիմնախնդիրները ներառում են մարդկանց առողջության վրա, այնուամենայնիվ, առողջապահական առաջնային հիմնախնդիրները Հայաստանում, ինչպես և աշխարհի շատ մասերում,

պայմանավորված են տնտեսական գործունեությունը և ապրելակերպով: Առողջապահական հիմնախնդիրները սերտորեն առնչվում են սոցիալ-տնտեսական իրադրության հետ և հաճախ դժվար է ապրելակերպով պայմանավորված հիմնախնդիրները տարանջատել բնապահպանական հիմնախնդիրներից, ինչպիսիք են հողի և ջրի աղտոտումը, որոնց նկատմամբ առավել զգայուն են բնակչության ցածր և միջին վաստակ ունեցող խավերը: Առողջության վրա ազդող բնապահպանական բնույթի վտանգները երկրի տարածաշրջաններում տարբեր են: Այսպես, փոշու և կապարի ազդեցությունն ավելի մեծ է խոշոր քաղաքներում, մասնավորապես Երևանում, քան գյուղական վայրերում:

ՀՀ-ում բնապահպանությանն առնչվող առողջապահական հիմնախնդիրներն առանձնապես խորացան 1970-80-ական թվականներին: Քաղաքների, արդյունաբերական շրջանների օդը, ջուրը և հողը խիստ աղտոտված էին քիմիական միացություններով, փոշով և ծանր մետաղներով, գյուղատնտեսության մեջ մեծ չափերի էր հասնում պեղիցիդների օգտագործումը՝ առաջ բերելով հողի և մակերեսային ջրերի աղտոտվածություն: 1990-ական թվականների սկզբի տնտեսական փլուզումն առաջ բերեց արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի կտրուկ նվազում, դրանով նվազեցնելով շրջակա միջավայրի վրա ազդող ճնշումը: Նվազեցին շրջակա միջավայրի հետ առնչվող սուր առողջապահական հիմնախնդիրների և մասնագիտական հիվանդությունների, ինչպիսիք են շնչառական ուղիների, աղետամոքսային տրակտի սուր հիվանդությունները, ինչպես նաև աշխատանքի վայրում տեղի ունեցած արտադրական պատահարների կրճատումը: Այնուամենայնիվ, տնտեսական անկումն առաջ բերեց շրջակա միջավայրի հետ առնչվող առողջապահական այլ կարգի հիմնախնդիրներ, մասնավորապես, որոշ վարակիչ հիվանդությունների թվի աճ՝ պայմանավորված բնապահպանական ծառայությունների խաթարումով: Այս հիմնախնդիրների կառավարումը դժվարացել է ինստիտուցիոնալ հնարավորությունների սահմանափակմամբ, ոչ լիարժեք օրենսդրական դաշտով, ինչպես նաև մոնիթորինգի և դրա գործադրման թույլ համակարգերով: Այս ամենին գումարվում է բնապահպանական խնդիրների մասին հասարակության խիստ ցածր տեղեկատվությունը:

Շրջակա միջավայրի հիմնախնդիրներից է նաև ՀՀ-ում օդի աղտոտվածությունը: Մթնոլորտում տրանսպորտային միջոցներից, արդյունաբերական ու գյուղատնտեսական աղբյուրներից կատարվող թունավոր միացությունների արտանետումների ծավալները խիստ նվազեցին 1990-1995թթ., սակայն ներկայումս տնտեսության աճին զուգընթաց՝ դրանք աճի միտում ունեն: Առողջապահական առումով նկատվել է օդի աղտոտվածության հետ կապ ունեցող որոշ սուր հիվանդությունների թվի նվազում, բայց և արձանագրվել է շնչառական ուղիների խրոնիկական հիվանդությունների և քաղցկեղի որոշ տեսակների թվի աճ: Քաղաքների մեծ մասում (մասնավորապես Երևանում) առողջության վրա թողած իրենց ազդեցությամբ առանձնանում են ծխազագերը, փոշին, կապարի արտանետումները և շենքերի ներսի օդի ցածր որակը:

Տնտեսության որոշ ոլորտներ ավելի շատ են աղտոտում, քան մյուսները և աղտոտվածության աղբյուրների վերլուծությունը սկսելիս անհրաժեշտ է ուսումնասիրել տարբեր ոլորտների աղտոտման առանձնահատկությունները:

Շրջակա միջավայրի պահպանման քաղաքականությանն ուղղված ռազմավարական միջոցառումների մեծ մասն իրենց վրա են կրում հենց շրջակա միջավայրն աղտոտողները: Սա համապատասխանում է «աղտոտողը վճարում է» սկզբունքին: Աղտոտողներին կարելի է տարբերակել հետևյալ խմբերով. գյուղատնտեսություն, արդյունաբերություն, այլ տնտեսություններ, և դեռ ավելին. կառավարությունը վճարում է շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ծախսերի զգալի մասը:

Արևմուտքում նոր ձեռնարկություններ շահագործման հանձնելը, եթե հանգեցնում է լրացուցիչ աղտոտվածություն, ապա այնպես են կազմակերպվում, որ այն ուղեկցվի այլ ձեռնարկություններում արտանետվող թափոնների կրճատմամբ և շրջակա միջավայրի վրա գումարային ծանրաբեռնվածության փոքրացմամբ: Դա հնարավոր է դառնում աղտոտման իրավունքի առևտրի մեխանիզմի շնորհիվ: Ձեռնարկատերը, ցանկանալով նոր գործ սկսել, ավելի թանկ է վճարում սարքավորումների տեղակայման համար, որպեսզի հնարավոր լինի արտանետվող թափոնները հասցնել նվազագույնի: Հաճախ հիմնահարցը լուծվում է մեկ այլ ձեռնարկատիրոջ կողմից՝ թունավոր արտանետումների նկատմամբ իրավունքը գնելով: Այդ իրավունքի վաճառողը ստացված դրամական միջոցներով իրականացնում է բնապահպանական միջոցառումների համալիր՝ հնարավորություն ստեղծելով արտանետումները հասցնել ներքին նշակետին: Այսպիսով, ունենալով դրամական միջոցներ, ձեռնարկատերն այն ներդնում է այնտեղ, որտեղ բնապահպանական միջոցառումները հանգեցնում են առավել արդյունք (իջեցնելով արտանետումների միավոր ծախսումները): Մեր պայմաններում, երբ տնտեսության մեջ առկա են ճյուղային նախարարությունների շահերը, նման մեխանիզմի իրականացման մասին խոսելը վաղ է: Եթե որևէ նախարարություն, նոր ձեռնարկություն կառուցելու համար, բյուջեից գումար է ստացել, ապա այն իր բաժնից ոչ մի լուծա չի տրամադրի այլ գերատեսչության:

Որպեսզի հնարավոր լինի խոսել աղտոտման իրավունքի առևտրի մասին, անհրաժեշտ է լուծել բնական ռեսուրսների սեփականության յուրահատուկ բնույթի հարցերը: Ըուկայական տնտեսության անցման պայմաններում շրջակա միջավայրի «ասիմիլյացիոն» ներուժը նույնպես պետք է համարվի սեփականության օբյեկտ: Հենց սեփականատերերը, իրացնելով իրենց իրավունքը, պետք է որոշեն ձեռնարկությունների աղտոտման չափաբաժինները: Ձեռնարկությունները, գնելով արտանետման իրավունքը, դառնում են ասիմիլյացիոն պոտենցիալի համասեփականատեր (սեփականության իր մասով), հետագայում կարող են սեփականության իրավունքը վաճառել այլ ձեռնարկությունների: Այդպիսով ձևավորվում է աղտոտման իրավունքի առևտրի մեխանիզմը: Հնարավոր է նաև մեխանիզմի առկայություն՝ սեփականատերը վարձակալության է տալիս իր սեփականության մի մասը: Այդ դեպքում էլ ձևավորվում է աղտոտման վճարի մեխանիզմը: Նշված մեխանիզմները չեն բացառում միմյանց և կարող են օգտագործվել փոխկապակցված, սակայն չեն կարող գործել առանց սեփականության հարաբերությունների կարգավորման: Դրա համար էլ բնական

ռեսուրսների տնտեսական գնահատման մեջ արտացոլված է հասարակական շահը (նույնիսկ օրենսդրական հիմունքներով) իր ռացիոնալ, համալիր խնայողաբար օգտագործմամբ, որը պետք է տնտեսագիտության կողմից ընդունվի որպես օբյեկտիվ իրողություն, և դրա հետ կապված՝ ունենա իրացման օբյեկտիվորեն պայմանավորված սահմաններ:

Վերջին տարիներին համընդհանուր ընդունելության են արժանացել այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են բնական ռեսուրսների դիմաց վճարը (ռոյալթի) և շրջակա միջավայրի աղտոտման վնասների փոխհատուցումը, որով էլ առաջին քայլերն են կատարվել բնություն-հասարակություն փոխհարաբերությունների արդյունավետ տնտեսական մեխանիզմների ստեղծման ճանապարհին:

Վճարի կազմակերպման առաջնահերթ հարցը բնական ռեսուրսների գնահատման մեջ է: Ներկայումս գոյություն ունեն բնական ռեսուրսների տնտեսական գնահատման չորս հիմնական մոտեցումներ. *ծախսային, ռենտային, արդյունքային և վերականգնողական, ինչպես նաև դրանց համակցումները*: Միաժամանակ գոյություն ունեն մոտեցումներ հիմնված բնական, բալային և հարաբերական ցուցանիշների վրա (մեծ դեր ունենալով վարչաիրավական կառավարման ժամանակ, սակայն որոնք չեն կարող հիմք ծառայել տնտեսական հարաբերությունների համար):

Էկոլոգիական հավասարակշռություն ապահովող հասարակության և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները վաղուց արդեն դարձել են հրատապ հիմնախնդիրներ: Բնության պահպանության ձգտումը ձևավորվում է այն բանից հետո միայն, երբ ապահովվում է սպառման որոշակի մակարդակ և դրանից հետո էկոլոգիական բարիքը նախընտրելի է դառնում տնտեսականից: Էկոլոգիական կողմորոշում ունեցող տնտեսության լծակներ են հանդիսանում.

- վառելիքի տնտեսումը որպես մթնոլորտ վնասակար արտանետումների նվազեցման միջոց,
- փոշեկորզումը և վնասակար արտանետումների միացություններից մաքրումը,
- արդյունաբերական արտանետումների վնասագերծումն այրելու միջոցով,
- տեխնոլոգիական և օդափոխության արտանետումների կատալիզատորի օգնությամբ վնասագերծումը,
- արդյունաբերական կեղտաջրերի վնասագերծումը կրակի օգնությամբ,
- շրջակա միջավայրի որակի վերահսկողության համակարգի կատարելագործումն ու զարգացումը:

Բնառեսուրսային նորմատիվ ակտերը կարգավորում են հասարակական հարաբերությունները, որոնք ստեղծում են բնական ռեսուրսների և բնության օբյեկտների առանձին տեսակների (հողերը, ընդերքի հարստությունները, ջրի, անտառների, մթնոլորտային օդի, կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների) ռացիոնալ օգտագործման ոլորտում: Այս խմբի մեջ են մտնում ՀՀ մի շարք օրենքներ, որոնք որոշում են բնաօգտագործման օբյեկտները և սուբյեկտները, կարգավորելով նրանց իրավահարաբերությունները, ոլորտները պետական կառավարման համակարգում, ինչպես նաև ընդգրկում են մի շարք նորմեր, որոնք ուղղված են կարգավորելու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը: Այդ նորմատիվ ակտերին բնորոշ են մի շարք ընդհանուր հատկանիշների առկայությունը.

- բնական ռեսուրսները կարող են գտնվել սեփականության տարբեր ձևերում, բայց նրանք հանդիսանում են սեփականության յուրահատուկ օբյեկտ, քանի որ օգտագործվում են ամբողջ հասարակության կողմից և այդ պատճառով պետությունը սահմանափակում է սեփականության իրավունքը բնական ռեսուրսների նկատմամբ, հաստատելով որոշակի իրավունքներ և պարտականություններ սեփականատերերի համար, որոշելով բնական ռեսուրսի նպատակային նշանակումը,
- բնական ռեսուրսների պահպանություն և ռացիոնալ օգտագործում հասկացությունը իրավական կարգավորման տեսակետից հանդիսանում է առաջնային: Օրինակ, ջուրը կարող է օգտագործվել խմելու, տնտեսական պահանջների, էներգիա ստանալու համար, տեխնիկական նպատակներով և այլն: Եթե ջուրը օգտագործվում է միայն խմելու համար, ապա առաջնային է համարվում նրա մաքրությունը, հետևապես օրենսդրությունը ելակետ է ընդունում այդ ոլորտը և ընդունում համապատասխան նորմատիվ ցուցանիշներ,
- յուրաքանչյուր կարգադրության կատարումը անհնարին է առանց պատասխանատվության առկայության: Իրավունքի նորման - դա ոչ թե երաշխավորություն է, այլ հրաման է, որի հետևում կանգնած է պետության հեղինակությունը:

Բոլոր դեպքերում ռեսուրսախնայողությունը, որպես պետական բնապահպանական կարգավորիչ, դեռևս անհրաժեշտ մակարդակով արտահայտված չէ ազգային բնապահպանական և բնօգտագործման քաղաքականությունում: Պատճառներից գերակայողը այն է, որ համրապետությունում կարգավորված չեն երկրորդային հումքի հաշվառման, համապատասխան կադաստրների տեղեկատվության ապահովման և երկրորդային ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման հարցերը: